

թիւն վասն հիւանդաց պահեստներն, նորոգեալ զայն յով շաւուրս՝ կամ ի հնգեւ տասան աւուրս միանգամ, Զնոյն սահմանեցին հարց լիբանանեան ժողովոյն, ի մէջ հաստատելոյ. որպէս յայտ է (ի զլ. 12 յաղագս խորհրդոյ հաղորդութեան. համար 24). Որովհետ օրինակօր յայտնի ցուցանի, թէ աթոռն առաքելական ոչ երբէք զանց արար՝ արգելուլ յունաց ըզծէսս ինչ, թէպէտ ե վաղնջուց հաստատեալս առ նոսա, յորժամ տեսանէր, թէ փնասակար ե յոռի էին, կամ լինիլ կարէին:

(Շարայարեկի)

ՎԵՐՁԻՆ ԽՕՍԲ ՍԸ

Դրանթ եւ անհաճոյ խնդրոյն վրայ Գերթերգիպաշեան Գեր.ը վերստին կը դառնայ կաթողիկէ Արժագանգի թ. 163 Միպտ. 5 Պրակին մէջ, ուր այլեւ թողուլ խնդրոյն գիտական երեւոյթը (որու մասին նոր րոս. լիբ մը չունենալը կը յայտնէ), կը պնդէ զարձեալ Միթարեան Միարանութեան դէմ խորժանաց վրայ, պախարակելով թէ՛ անոր գործունէութիւնը մանկանց դաստիարակութեան մէջ եւ թէ՛ մանաւանդ հաստոց անկեղծութիւնն եւ ամբողջութիւնը ընդ աշխարհի յարաբերութեանց մէջ:

Գիտէ Մեծ. Գերապայծառը (եւ այս անգամ չի սխալիր) որ ի յարգանս մեր երկ. դարեան հաստատուն սկզբունքին՝ չպատասխանելու այն ամէն բանի որ գիտական ասպարէզին դուրս է, լուծեամբ պիտի անտեսենք իւր զրգուրթիւնները:

Առանց այս սկզբունքին, առանց համատեղութեան զգացմանց, Գեր.ը պիտի գտնէր հոս իւր թիւադրութեանց արժանաւոր պատասխանը:

Պիտի տեսնէր որ այսօրուան Միթարեաններ տարբեր չեն հիններէն, քանի որ այն հինները, որ այսօր կը գոլուին Գե-

րապայծառէն յանարգութիւն նորերուս, մի ե նոյն հակառակութիւններն ու մի ե նոյն հակառակութիւններն ունեցած են իրենց ժամանակ, ե զժաղաղաբար միշտ մի ե նոյն պատրուակաւ ե մի ե նոյն հակառակորդաց բանակէ:

Աւելի քան երկու հարիւր տարուան պատմութիւն մը, առանց ընդհատութեան, կու տայ մեզ ասոր ասպարէսները:

Գիտէ ինքն Մեծ. Գերապայծառը որ չկայ բնաւ ընկերութիւն մը որ չունենայ իւր թերացող անդամները, ինչպէս չկայ նաեւ անհատ մը՝ որքան ալ մեծ ե առաքինի, որ չունենայ իւր զէթ մանր թերութիւնները. սակայն ինչպէս անիրաւ է այսպիսի մանր թերութեանց համար, անտեսել անհատի մը վեհագոյն յատկութիւնը ու արժանիքը, այսպէս ալ անիրաւ է Միարանութիւն մը անուանարկել եթէ երբէք մի քանի անդամք թերացած զտնուին:

Միթթ. Միարանութիւնն իւր երկդարեան գործունէութեան մէջ միակ կանոն ունեցած է՝ ճշմարտութիւնն ե ուղղութիւնը, ե չէ տատամսած յառաջադիմելու, առանց աջ կամ ահեակ շեղելու, ոչ հակառակութեանց նետերէ ե ոչ գովասանաց ծափերէ:

Գեր.ը մեր հաւատոց անկեղծութեան ե ամբողջութեան մասին իւր քաղցրատաւ տարակոյսները կ'ուզէ փնտռել այցելութեանց մէջ որոնք տեղի ունեցած են մերթ ընդ մերթ: Այս տարակոյսները Զնջելու համար ստիպուած ենք յիշեցնելու իրեն որ զրպարտութիւնը որոնք այցելութեանց ե քննութեանց պատճառ եղած են, ոչ թէ արատ մը բերած են Միթարեան առումն, այլ ընդ հակառակն ամէն անգամ նոր փայլ նոր պերճութիւն տուած են իւր անմեղութեան ե ճոխացուցած են իւր արդեանց պատկը: Կը յիշեցնենք զարձեալ որ մենք չենք առաջին անգամ այս զրպարտութեանց զոհուող. աւելի քան երկու դարուց մէջ ո՛չ մէկ Միթարեան խնայուած է անկէ, ե նոյն ինքն մեր բռնաշնորհ հայրը Մեծ Միթարեան Արքայ առաջինն եղած է եթարկուելու քննու-

թեանց և ի Հոռվմ կոչուելու, ուր իւր անթիծ սրբութիւնը նշողեց՝ շլացնելու չափ բոլոր հակառակորդները, և ուր այսօր երանացուցման պատկեր կը յօրինուին իրեն ի պատիւ:

Իսկ թէ ինչո՞ւ համար են այս ամէն հակառակութիւնք, որ միշտ պարբերաբար կը նորոգուին և որ դժբաղդաբար անշուշտ դեռ պիտի նորոգուին, շատ ճշտու ցուցուած պիտի տեսնէ Մեծ. Գեր.ը եթէ կարդայ Mons. Coretti, Կ. Պոլսոյ Գահա-նայապետական Նուիրակին 1816 Հոկտ. 10ին գրած տեղեկագիրն առ Մ. Ժողովը Տարածման Հաւատոյ:

Այս տեղեկագիրը կ'ըսէ Մխիթարեանց համար.

... Spero però che questi venerabili religiosi come sono irreprensibili per la condotta di loro vita, così anche sono sani ed integri nella purità della fede. E che tutte queste differenze nascono unicamente fra di essi e'l clero secolare per voler li primi unitamente colla loro nazione cattolica esser sì cattolici, ma Armeni; e per voler gli altri che siano cattolici ma anche Latini o quasi Latini. Conoscendo bene questi che altrimenti non troveranno il loro conto fra una nazione in tutto armena ancorchè cattolica. Պարզ է:

Իսկ զալով դաստիարակութեան խնդրոյն, գիտէ նոյնպէս ինքն Մեծ Գեր.ը թէ ո՞րքան դժուարին և փափուկ գործ է այդ, և թէ յաջողութիւնն յայդմ կը կա-յանայ ո՛չ այնքան դաստիարակին կարողութեան կամ յարկութեանց ու սխալմին մէջ, որքան ենթակային տրամադրութեանց և ընդունակութեան մէջ: Այնու հանդերձ եթէ համեստութեան զգացումը չարգիւշէր մեզի, մի առ մի պիտի յիշատակէինք հոս այս մասին մէջ ալ, արեւմտեան և արեւելեան, հին և նոր, եկեղեցական և քաղաքական հեղինակութեանց անկեղծ վկայութիւնները, սկսեալ վենետիկոյ և Բա-

րիզու պատրիարքներէ և արքեպիսկոպոս-ներէ, մինչև ի մեր այժմու թեմական արհի. Գեր. Եպիսկոպոսներն ու նոյն ինքն Գերբերջանիկ Հոգևոր Տէրն թերզեան Կաթողիկոս Պատրիարք: Ինքն իսկ Գեր. թերզիպաշեան Գերապայծառը, անշուշտ ասանց նման կը մտածէր դեռ մի քանի տարի առաջ, երբ իւր ամենամեծ ազգականները (քեռորդիքը, եթէ չենք սխալի) կը յանձնէր Մխիթարեանց դաստիարակութեան:

Sapienti sat.

Հ. Յ. ԱԻԳԵՐ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՎԵՆԵՏԻԱՆ

ՓԱ. ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՍԻՆ ՄԵՋ

□ □ □

Այս տիտղոսի ներքև փորքիկ ոկնարկ մ'ուղղեցինք դէպի արուեստական գեղեցիկն, ամիսներ առաջ, երբ նոր բացուեցաւ ցուցահանդէսը *. Իսկ այսօր այն պահուն երբ կը փակուի այդ՝ անշուք և լուին տըխրութեամբ, կ'ուզենք ակնարկ մ'ուղղել ընդհանուր գեղեցկագիտական գաղափարի արտայայտութեանց վրայ. կ'ուզենք հարեանցի նշմարել ճիգն այն տաղանդաւոր արուեստագէտներու որոնք կամ տարինեւրու փորձառութեամբ ու ջանքերով ճշխացած և կամ մղուած երիտասարդական խանդովն ու աւինով Che assalta il ciel coll' anima — Per tórne una scintilla, որ հոգսով կը խոյանայ յերկինս կայծ մ'անտի կորգեթոս համար, կրցան կորգել յիրաւի յաղթանակի պսակ մը:

* Բացառվել Թ. 5 էջ 239-240.

Իբրև նմոյշ մը գեղեցիկ ճաշակի, կը ներկայացնենք հոս այս անգամուան Յուդահանդէսին մի քանի պատկերներ, անոնց հետ դասելով նաև կեդրոնական մեծ տաղաւարի նորաշէն ճակատը, և Յուդահանդէսի ծանուցագիրը (Խիւլաջոյ կամուրջին պատկերով՝ ծաղկազարդ պնտուս):